1. Քաղաքացի Զավեն Մանվելի Ուստյանին ուղղակի վաճառքի միջոցով օտարել սեփականության իրավունքով իրեն պատկանող Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Գարեգին Նժդեհի փողոցի N 16/14 հասցեի 76.05 (յոթանասունվեց ամբողջ հինգ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասով բնակելի տանը հարակից, Գարեգին Նժդեհի փողոցի N 16/17 հասցեի համայնքի սեփականություն հանդիսացող, կառուցապատումից ազատ, բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 10.74 (տասն ամբողջ յոթանասունչորս հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասը՝ բնակելի տան ընդլայնման նպատակով:
2. Օտարվող հողամասի ուղղակի վաճառքի գին սահմանել տվյալ հողամասի կադաստրային արժեքով, որը հողամասի օտարման պահին կազմում է 10514 (տասը հազար հինգ հարյուր տասնչորս) Հայաստանի Հանրապետության դրամ՝ 1.0 (մեկ) քառակուսի մետրի դիմաց, ընդամենը՝ 112920 (մեկ հարյուր տասներկու հազար ինը հարյուր քսան) Հայաստանի Հանրապետության դրամ:
3. Սահմանված կարգով կնքել հողամասի առքուվաճառքի պայմանագիր (պատասխանատու քաղաքաշինության և ճարտարապետության բաժին):

4. Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման և պայմանագրի նոտարական վավերացման ծախսերը կատարել քաղաքացի Զավեն Մանվելի Ուստյանի միջոցների հաշվին:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Զավեն Մանվելի Ուստյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

28.11.2022

Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2022թ. ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«28» Հոկտեմբերի 2022 թվականի N 2603Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՉԵՐԱԶԻ ՓՈՂՈՑԻ N 8/3 ՀԱՍՑԵԻ 20.0 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Չերազի փողոցի N 10 հասցեի 200.33 (երկու հարյուր ամբողջ երեսուներեք հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասով բնակելի տունը սեփականության իրավունքով պատկանում է քաղաքացի Ազատ Վարշամի Հարությունյանին (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 26042012-08-0114 վկայական):

Քաղաքացի Ազատ Վարշամի Հարությունյանը դիմել է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարին՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքին սեփականության իրավունքով պատկանող (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 28102022-08-0053 վկայական) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Չերազի փողոցի N 8/3 հասցեի 20.0 (քսան) քառակուսի մետր մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասն ուղղակի վաճառքի միջոցով իրեն օտարելու խնդրանքով:

Նկատի ունենալով վերոգրյալը, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի մայիսի 26-ի N 550-Ն որոշման 1-ին կետի 3-րդ, 4-րդ, 5-րդ և 6-րդ ենթակետերի, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 43-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, հողային օրենսգրքի 63-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, 66-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, հիմք ընդունելով Գյումրի համայնքի ավագանու 2022 թվականի նոյեմբերի 11-ի N 211-Ա որոշումը և քաղաքացի Ազատ Վարշամի Հարությունյանի դիմումը (մուտքագրված համայնքապետարանում 2022 թվականի հուլիսի 07-ին N 11670 թվագրմամբ)՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Քաղաքացի Ազատ Վարշամի Հարությունյանին ուղղակի վաճառքի միջոցով օտարել սեփականության իրավունքով իրեն պատկանող Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Չերազի փողոցի N 10 հասցեի 200.33 (երկու հարյուր ամբողջ երեսուներեք հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասով բնակելի տանը հարակից, Չերազի փողոցի N 8/3 հասցեի համայնքի սեփականություն հանդիսացող, կառուցապատումից ազատ, բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 20.0 (քսան) քառակուսի մետր մակերեսով հողամասը՝ որպես բակ:
2. Օտարվող հողամասի ուղղակի վաճառքի գին սահմանել տվյալ հողամասի կադաստրային արժեքով, որը հողամասի օտարման պահին կազմում է 16177 (տասնվեց հազար մեկ հարյուր յոթանասունյոթ) Հայաստանի Հանրապետության դրամ՝ 1.0 (մեկ) քառակուսի մետրի դիմաց, ընդամենը՝ 323540 (երեք հարյուր քսաներեք հազար հինգ հարյուր քառասուն) Հայաստանի Հանրապետության դրամ:
3. Սահմանված կարգով կնքել հողամասի առքուվաճառքի պայմանագիր (պատասխանատու քաղաքաշինության և ճարտարապետության բաժին):

4. Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման և պայմանագրի նոտարական վավերացման ծախսերը կատարել քաղաքացի Ազատ Վարշամի Հարությունյանի միջոցների հաշվին:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Ազատ Վարշամի Հարությունյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

28.11.2022

Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2022թ. ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«28» Նոյեմբերի 2022 **թվականի** N 2602-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՉԵՐԱԶ ՓՈՂՈՑԻ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՄԲ ԻՆՔՆԱԿԱՄ ԶԲԱՂԵՑՐԱԾ 33.68 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀԱՄԱՅՆՔԱՊԱՏԿԱՆ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ 30.83 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ԱՐՏԱՔԻՆ (24.54 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՆԵՐՔԻՆ) ՄԱԿԵՐԵՍՈՎ ԱՎՏՈՏՆԱԿԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐԵԼՈՒ ԵՎ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Գյումրի քաղաքի Չերազ փողոցի հարևանությամբ գտնվող ինքնակամ զբաղեցրած 33.68 (երեսուներեք ամբողջ վաթսունութ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով համայնքապատկան հողամասում ինքնակամ կառուցված է 30.83 (երեսուն ամբողջ ութսուներեք հարյուրերորդական) քառակուսի մետր արտաքին (24.54 (քսանչորս ամբողջ հիսունչորս հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին) մակերեսով ավտոտնակ:

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի <<Պետական կամ համայնքային հողամասերում գտնվող ինքնակամ կառույցների նկատմամբ պետության կամ համայնքների սեփականության իրավունքի պետական գրանցման կարգը հաստատելու մասին>> թիվ 731-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետի և <<Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին>> թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ բաժնի 33-րդ կետի՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Գյումրի քաղաքի Չերազ փողոցի հարևանությամբ գտնվող ինքնակամ զբաղեցրած 33.68 (երեսուներեք ամբողջ վաթսունութ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով համայնքապատկան հողամասում ինքնակամ կառուցված 30.83 (երեսուն ամբողջ ութսուներեք հարյուրերորդական) քառակուսի մետր արտաքին (24.54 (քսանչորս ամբողջ հիսունչորս հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին) մակերեսով ավտոտնակը համարել համայնքի սեփականություն և այն ճանաչել օրինական:
2. Սույն որոշման 1-ին կետում նշված ավտոտնակը և հողամասը գնման նախապատվության իրավունքով (ուղղակի վաճառք) ձեռք բերելու առաջարկություն անել տվյալ կառույցն իրականացրած քաղաքացի Արմեն Հարությունի Մինասյանին:
3. Սահմանված կարգով նախապատրաստել պետական գրանցման համար օրենքով նախատեսված փաստաթղթերի փաթեթը /պատասխանատու քաղաքաշինության և ճարտարապետության բաժին/:
4. Գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումը իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

28.11.2022

Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ

2022թ. ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«28» Հոկտեմբերի 2022 թվականի N2601-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 28 -Ի N 2351-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2022 թվականի հոկտեմբերի 28-ի <<Քաղաքացիներ Միշա և Կարապետ Ղազարյաններին սեփականության իրավունքով պատկանող Գյումրի քաղաքի Ֆուրմանովի փողոց N 39 հասցեի տան հողամասում ինքնակամ կառուցված 108,73 քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելին ,ինքնակամ բացված 1(մեկ) դուռը, ինքնակամ փակված 1(մեկ) պատուհանը, ինքնակամ փակված 2(երկու) դուռը օրինական ճանաչելու և սպասարկման համար օրինական հողամասին կից ավել օգտագործվող մինչև 62,9 քառակուսի մետր մակերեսով հողամասի և նրա վրա առկա շինության կարգավիճակի մասին>> N 2351-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու անհրաժեշտություն է առաջացել, որոշման մեջ տեղ գտած սխալի պատճառով (հիմք՝ Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի, գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին 16/11/2022 թվականի N Կ-16112022-08-0177 որոշում):

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և 34-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2022 թվականի հոկտեմբերի 28-ի <<Քաղաքացիներ Միշա և Կարապետ Ղազարյաններին սեփականության իրավունքով պատկանող Գյումրի քաղաքի Ֆուրմանովի փողոց N 39 հասցեի տան հողամասում ինքնակամ կառուցված 108,73 քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելին ,ինքնակամ բացված 1(մեկ) դուռը, ինքնակամ փակված 1(մեկ) պատուհանը, ինքնակամ փակված 2(երկու) դուռը օրինական ճանաչելու և սպասարկման համար օրինական հողամասին կից ավել օգտագործվող մինչև 62,9 քառակուսի մետր մակերեսով հողամասի և նրա վրա առկա շինության կարգավիճակի մասին>> N 2351-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը՝
   1) որոշման 1-ին կետում <<19612>> թիվը փոխարինել <<1961>> թվով :

28.11.2022

Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ

ք.Գյումրի 2022 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«28» Նոյեմբերի 2022 թվականի N 2600-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 29-Ի N 1679-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 13 -Ի N 2876-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու քաղաքապետի 2012 թվականի սեպտեմբերի 13-ի <<Գյումրի քաղաքի Գերցենի փողոցի հարևանությամբ գտնվող բնակելի տան կառուցապատման ու սպասարկման համար զբաղեցրած 392,7 քառակուսի մետր մակերեսով հողամասի կարգավիճակի մասին>> N 2876-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու անհրաժեշտություն է առաջացել Սեդա Ասատրյանի մահվան պատճառով (մահվան վկայական N 224764 և հիմք՝ Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի, գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին 08/09/2022 թվականի N Կ-08092022-08-0037 որոշում) :

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 36-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և 34-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու քաղաքապետի 2012 թվականի սեպտեմբերի 13-ի <<Գյումրի քաղաքի Գերցենի փողոցի հարևանությամբ գտնվող բնակելի տան կառուցապատման ու սպասարկման համար զբաղեցրած 392,7 քառակուսի մետր մակերեսով հողամասի կարգավիճակի մասին>> N 2876-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը՝

1) նախաբանում, որոշման 1-ին կետում <<Սեդա Ասատրյան>> բառերը փոխարինել <<Ալիսա Վոլոդյայի Ասատրյանին (ծնված 1952 թվականի սեպտեմբերի 16-ին)>>թվերով և բառերով.

2. Գյումրի համայնքի ղեկավարի 2022 թվականի հուլիսի 29-ի N 1679-Ա որոշումը ճանաչել ուժը կորցրած:

28.11.2022

Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ

ք.Գյումրի 2022 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«28» Նոյեմբերի 2022 թվականի N 2599-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԳՈՐԾԱՐԱՆԱՅԻՆ ՆՐԲԱՆՑՔ N 65/1 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ԿԻՑ 8,85 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Գյումրի քաղաքի Գործարանային նրբանցք N 65/1 հասցեի բնակելի տանը կից 8,85 (ութ ամբողջ ութսունհինգ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասը Գյումրի քաղաքի գլխավոր հատակագծի համաձայն՝ հանդիսանում է բնակավայրերի նպատակային նշանակության ընդհանուր օգտագործման հողեր գործառնական նշանակության հողամաս:

Տարածքի կառուցապատման նախագծին համապատասխանեցնելու նպատակով կարիք է առաջացել փոփոխել նշված հողամասի գործառնական նշանակությունը:

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշմամբ հաստատված կարգի 24-րդ կետի 4-րդ ենթակետի «ա» պարբերության և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի նախագահի տեղակալի և Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալի գրությունները (մուտքագրված համայնքապետարանում 2022 թվականի հուլիսի 13-ին և 14-ին՝ համապատասխանաբար N11963 և N12013 թվագրություններով)՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Գյումրի քաղաքի Գործարանային նրբանցք N 65/1 հասցեի բնակելի տանը կից 8,85 (ութ ամբողջ ութսունհինգ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը բնակավայրերի նպատակային նշանակության ընդհանուր օգտագործման հողեր գործառնական նշանակությունից փոփոխել բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատում գործառնական նշանակության:

23.11.2022

ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ**

2022թ. ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«28» նոյեմբերի 2022 **թվականի** N 2598-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԿԱՐՍԻ ԽՃՈՒՂԻ N 25/1 ՀԱՍՑԵԻ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Կարսի խճուղի N 25/1 հասցեի 19,97743 հեկտար մակերեսով հողամասը սեփականության իրավունքով պատկանում է Հայաստանի Հանրապետությանը և ենթարկված է պետական գրանցման (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 07102022-08-0006վկայական):

Պետական գույքի կառավարման կոմիտեի նախագահի տեղակալ Գևորգ Բաբայանը դիմել է Գյումրի համայնքի ղեկավարին հողամասի նպատակային և գործառնական նշանակությունները փոփոխելու միջոցով Գյումրի քաղաքի քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերին համապատասխանացնելու խնդրանքով (գրությունը մուտքագրված համայնքապետարանում 2022 թվականի հոկտեմբերի 10-ին N18298 թվագրմամբ:

Նկատի ունենալով, որ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Շիրակ-4 միջռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթում ներառնված Գյումրի համայնքի ավագանու 2022 թվականի հունիսի 22-ի N 124-Ա որոշմամբ հաստատված Գյումրի քաղաքի գլխավոր հատակագծի հեռանկարային զարգացման գծագրով հողամասը հանդիսանում է բնակավայրերի նպատակային նշանակության խառը կառուցապատման հող, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1920-Ն որոշմամբ հաստատված կարգի 25-րդ կետի 1-ին ենթակետի դրույթով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Փոփոխել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Կարսի խճուղի N 25/1 հասցեի 08-001-0240-0027 կադաստրային ծածկագրով 19,97743 հեկտար մակերեսով հողամասի նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի նպատակային նշանակության, իսկ գործառական նշանակությունը՝ խառը կառուցապատում գործառնական նշանակության:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

23.11.2022

ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ**

2022թ. ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«28» Նոյեմբերի 2022 **թվականի** N 2597-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՁՅՈՒԴՈՅԻ ՏՂԱՄԱՐԴԿԱՆՑ ԵՎ ԿԱՆԱՆՑ ԱՌԱՋՆՈՒԹՅԱՆԸ ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՎԱՔԱԿԱՆ ԹԻՄԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ԵՎ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԾԱԽՍԵՐԸ ՀՈԳԱԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ելնելով Հայաստանի Հանրապետության ձյուդոյի տղամարդկանց եվ կանանց 2022 թվականի դեկտեմբերի 3–4-ը Երևան քաղաքում կայանալիք առաջնությանը Գյումրու հավաքական թիմի մասնակցությունը ապահովելու անհրաժեշտությունից, նկատի ունենալով ձյուդոյի ֆեդերացիայի 2022 թվականի օրացուցային պլանը, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Գյումրի համայնքի ավագանու 2018 թվականի նոյեմբերի 06-ի N119-Ն որոշման 2-րդ կետով հաստատված հավելվածի 8-րդ կետի 2-րդ ենթակետի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի մայիսի 13-ի N692-Ն որոշման 2-րդ մասի կետի <<ա>> ենթակետով հաստատված N1 հավելվածը, Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆիզկուլտուրայի և սպորտի բաժնի պետի կողմից 2022 թվականի նոյեմբերի 28-ին ներկայացված գրությունն ու նախահաշիվը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության ձյուդոյի տղամարդկանց եվ կանանց առաջնությանը մասնակցելու համար 2022 թվականի դեկտեմբերի 3–4-ը քաղաք Երևան գործուղել թվով 20 (քսան) անձանց:
2. Հանձնարարել Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետին՝ գործուղման ծախսերի հետ կապված գումարների վճարումները կատարել Գյումրի համայնքի 2022 թվականի բյուջեի 8/1/1 գործառնական դասակարգման 4221 <<Ներքին գործուղումներ>> տնտեսագիտական դասակարգման հոդվածից՝ օրենքով սահմանված կարգով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ԱՍԱՏՐՅԱՆ

2022 թ. ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«28» Նոյեմբերի 2022 **թվականի** N 2596-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՊՈՐՏԱՅԻՆ ԱԿՐՈԲԱՏԻԿԱՅԻ ԳԱՎԱԹԻ ԱՌԱՋՆՈՒԹՅԱՆԸ ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՎԱՔԱԿԱՆ ԹԻՄԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ԵՎ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԾԱԽՍԵՐԸ ՀՈԳԱԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ելնելով Հայաստանի Հանրապետության սպորտային ակրոբատիկայի գավաթի 2022 թվականի դեկտեմբերի 3–5–ը Երևան քաղաքում կայանալիք առաջնությանը Գյումրու հավաքական թիմի մասնակցությունը ապահովելու անհրաժեշտությունից, նկատի ունենալով մարմնամարզության ֆեդերացիայի 2022 թվականի օրացուցային պլանը, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Գյումրի համայնքի ավագանու 2018 թվականի նոյեմբերի 06-ի N119-Ն որոշման 2-րդ կետով հաստատված հավելվածի 8-րդ կետի 2-րդ ենթակետի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի մայիսի 13-ի N692-Ն որոշման 2-րդ մասի կետի <<ա>> ենթակետով հաստատված N1 հավելվածը, Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆիզկուլտուրայի և սպորտի բաժնի պետի կողմից 2022 թվականի նոյեմբերի 28-ին ներկայացված գրությունն ու նախահաշիվը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության սպորտային ակրոբատիկայի գավաթի առաջնությանը մասնակցելու համար 2022 թվականի դեկտեմբերի 3–5–ը քաղաք Երևան գործուղել թվով 30 (երեսուն) անձանց:
2. Հանձնարարել Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետին՝ գործուղման ծախսերի հետ կապված գումարների վճարումները կատարել Գյումրի համայնքի 2022 թվականի բյուջեի 8/1/1 գործառնական դասակարգման 4221 <<Ներքին գործուղումներ>> տնտեսագիտական դասակարգման հոդվածից՝ օրենքով սահմանված կարգով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2022 թ. ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«28» Դեկտեմբերի 2022 թվականի N 2595-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՍԿԵՏԲՈԼԻ ՏՂԱՄԱՐԴԿԱՆՑ ԳԱՎԱԹԻ ԱՌԱՋՆՈՒԹՅԱՆԸ ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՎԱՔԱԿԱՆ ԹԻՄԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ԵՎ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԾԱԽՍԵՐԸ ՀՈԳԱԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ելնելով Հայաստանի Հանրապետության բասկետբոլի տղամարդկանց գավաթի 2022 թվականի նոյեմբերի 30-ից դեկտեմբերի 3–ը Երևան քաղաքում կայանալիք առաջնությանը Գյումրու հավաքական թիմի մասնակցությունը ապահովելու անհրաժեշտությունից, նկատի ունենալով Հայաստանի Հանրապետության բասկետբոլի ֆեդերացիայի 2022 թվականի օրացուցային պլանը, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվ ածի 1-ին մասի 24-րդ կետի, Գյումրի համայնքի ավագանու 2018 թվականի նոյեմբերի 06-ի N119-Ն որոշման 2-րդ կետով հաստատված հավելվածի 8-րդ կետի 2-րդ ենթակետի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի մայիսի 13-ի N692-Ն որոշման 2-րդ մասի կետի <<ա>> ենթակետով հաստատված N1 հավելվածը, Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆիզկուլտուրայի և սպորտի բաժնի պետի կողմից 2022 թվականի նոյեմբերի 28 -ին ներկայացված գրությունն ու նախահաշիվը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության բասկետբոլի տղամարդկանց գավաթի առաջնությանը մասնակցելու համար 2022 թվականի նոյեմբերի 30-ից դեկտեմբերի 3–ը քաղաք Երևան գործուղել թվով 14 անձանց:
2. Հանձնարարել Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետին՝ գործուղման ծախսերի հետ կապված գումարների վճարումները կատարել Գյումրի համայնքի 2022 թվականի բյուջեի 8/1/1 գործառնական դասակարգման 4221 <<Ներքին գործուղումներ>> տնտեսագիտական դասակարգման հոդվածից՝ օրենքով սահմանված կարգով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ԱԱՄԱՈՆՅԱՆ

2022 թ. ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«28» Հոկտեմբերի 2022 թվականի №2594-Ա

ԳՅՈՒՄՐԻ Ք. ՂՈՒԿԱՍՅԱՆ ՓՈՂՈՑ 30/8 ՀԱՍՑԵԱԳՐՈՒԹՅԱՄԲ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՄԸ (ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳԻՐ 08-001-1337-0040) ԵՐԿՈՒ ՄԱՍԵՐԻ ԲԱԺԱՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՆՈՐ ՀԱՍՑԵՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի № 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 2-րդ ենթակետով, 33-րդ կետով, հիմք ընդունելով ՀՀ Պետական գույքի կառավարման կոմիտեի նախագահի տեղակալ Գ. Բաբայանի գրությունը (համայնքապետարանում մուտքագրված №22182 թվագրմամբ) և չափագրման արտոնագիր ունեցող «Ս ՖՈՌՄԱՏ ՍԹԱՅԼ» ՍՊԸ-ի կողմից տրամադրված հողամասի և շինության բաժանման սխեմաները՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1) 608.77 քմ մակերեսով հողամասը և դրա վրա առկա շինությունը հասցեավորել՝ **ԳՅՈՒՄՐԻ Ք., Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆ ՓՈՂՈՑ, 43/4:**
2) 494.56 քմ մակերեսով հողամասը և դրա վրա առկա շինությունը հասցեավորել՝ **ԳՅՈՒՄՐԻ Ք., Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆ ՓՈՂՈՑ, 43/5:**

Недействительная подпись

Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2022թ. ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«28» Դեկտեմբերի 2022 թվականի № 2593Ա

ԳՅՈՒՄՐԻ Ք., Գ. ՆԺԴԵՀԻ ՓՈՂՈՑ, №7, 42, 43 ՍԵՆՅԱԿՆԵՐԸ (ՎԿԱՅԱԿԱՆ N 1952526) ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 29-րդ կետի 4-րդ ենթակետով և հիմք ընդունելով քաղաքացի Համլետ Սարգսյանի դիմումը (համայնքապետարանում մուտքագրված №22217 թվագրմամբ)՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

Գյումրի ք., Գ. Նժդեհի փողոց, №7, 42, 43 սենյակները (վկայական N 1952526) վերահասցեավորել՝

ԳՅՈՒՄՐԻ Ք., Գ. ՆԺԴԵՀԻ ՓՈՂՈՑ, 7 ՇԵՆՔ, 42:

Недействительная подпись

X

Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2022թ. ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«28» նոյեմբերի 2022 թվականի № 2592-Ա

ԳՅՈՒՄՐԻ Ք., Մ. ԽՈՐԵՆԱՑՈՒ ՓՈՂՈՑ 66 ՀԱՍՑԵԱԳՐՈՒԹՅԱՄԲ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՇԵՆՔԸ (ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳԻՐ 08-001-0119-0031) ԵՐԿՈՒ ՄԱՍԵՐԻ ԲԱԺԱՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՆՈՐ ՀԱՍՑԵՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի № 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 2-րդ ենթակետով, 33-րդ կետով և հիմք ընդունելով քաղաքացի Մուշեղ Գրիգորյանի լիազորված անձ Գուրգեն Պողոսյանի դիմումը (համայնքապետարանում մուտքագրված №22230 թվագրմամբ) ու չափագրման արտոնագիր ունեցող «Արսեն Առաքելյան» ԱՁ-ի կողմից տրամադրված հողամասի և շինության բաժանման սխեմաները՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1) 1195,35 քմ մակերեսով հողամասը և դրա վրա առկա շինությունը հասցեավորել՝ **ԳՅՈՒՄՐԻ Ք., Մ. ԽՈՐԵՆԱՑՈՒ ՓՈՂՈՑ, 66:**
2) 6,4 քմ մակերեսով հողամասը և դրա վրա առկա շինությունը հասցեավորել՝ **ԳՅՈՒՄՐԻ Ք., Մ. ԽՈՐԵՆԱՑՈՒ ՓՈՂՈՑ, 66/2:**

Недействительная подпись

X

Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2022թ. ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

<< 28 >> Նոյեմբերի 2022 թվականի N 2591-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ << ԵՐԱԶԱՆՔ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ>> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ՆԱՐԻՆԵ ՎՈԼՈԴՅԱՅԻ ԳԱՍՊԱՐՅԱՆԻՆ ԱՄԵՆԱՄՅԱ ԵՐԿԱՐԱՑՎԱԾ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Աշխատանքային օրենսգրքի 167-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N 1599-Ն որոշմամբ հաստատված ցանկի 1-ին կետով և հիմք ընդունելով Նարինե Վոլոդյայի Գասպարյանի 2022 թվականի նոյեմբերի 28-ի դիմումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի << Երազանք մանկապարտեզ >> համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Նարինե Վոլոդյայի Գասպարյանին տրամադրել 2022 թվականի աշխատանքային տարվա ամենամյա երկարացված արձակուրդը՝ 2022 թվականի նոյեմբերի 29-ից:

2. Ամենամյա երկարացված արձակուրդը՝ 25 աշխատանքային օր՝ 2022 թվականի նոյեմբերի 29-ից մինչև 2023 թվականի հունվարի 03-ը ներառյալ:

3. Ամենամյա երկարացված արձակուրդի ընթացքում Նարինե Վոլոդյայի Գասպարյանի աշխատանքային պարտականությունների կատարումը վերապահել նույն կազմակերպության մեթոդիստ Նունե Հենրիկի Մկրտչյանին:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Նարինե Վոլոդյայի Գասպարյանին և Նունե Հենրիկի Մկրտչյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

28.11.2022

Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ

ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«28» Նոյեմբերի 2022 թվականի N 2590-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԼԱԶՈՅԻ ՓՈՂՈՑ N59/2 ՏԱՆԸ ԿԻՑ ԳՏՆՎՈՂ 65.85 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ, ՆՐԱ ՎՐԱ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ 65.85 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ԱՐՏԱՔԻՆ (53.25 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՆԵՐՔԻՆ) ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԵԼԻ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐԵԼՈՒ ԵՎ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Գյումրի քաղաքի Լազոյի փողոց N59/2 տանը կից, 65.85(վաթսունհինգ ամբողջ ութսունչորս հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով համայնքապատկան հողամասում ինքնակամ կառուցված է 65.85(վաթսունհինգ ամբողջ ութսունչորս հարյուրերորդական) քառակուսի մետր արտաքին (53.25 (հիսուներեք ամբողջ քսանհինգ հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին) մակերեսով բնակելի շինություն, որը տիրապետում և օգտագործում է քաղաքացի Խաչատուր Հայրապետյանը:

Նկատի ունենալով, որ շինության պահպանելը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, չի գտնվում Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 731-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետի, թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 3-րդ կետի, 4-րդ բաժնի 33-րդ կետի՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Գյումրի քաղաքի Լազոյի փողոց N59/2 տանը կից, 65.85(վաթսունհինգ ամբողջ ութսունչորս հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով համայնքապատկան հողամասում ինքնակամ կառուցված 65.85(վաթսունհինգ ամբողջ ութսունչորս հարյուրերորդական) քառակուսի մետր արտաքին (53.25 (հիսուներեք ամբողջ քսանհինգ հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին) մակերեսով բնակելի շինությունը համարել համայնքի սեփականություն և այն ճանաչել օրինական:
2. Սույն որոշման 1-ին կետում նշված օրինականացված շինությունը և հողամասը գնման նախապատվության իրավունքով (ուղղակի վաճառք) ձեռք բերելու առաջարկություն անել տվյալ կառույցն իրականացրած քաղաքացի Խաչատուր Հայրապետյանին:
3. Սահմանված կարգով նախապատրաստել պետական գրանցման համար օրենքով նախատեսված փաստաթղթերի փաթեթը (պատասխանատու՝ քաղաքաշինության և ճարտարապետության բաժին):
4. Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումն իրականացնել օրենսդրությամբ սահմանված կարգով:

28.11.2022

Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ

2022 թ. ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«28» նոյեմբերի 2022 թվականի N 2589-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԿՈՇՏՈՅԱՆ ՓՈՂՈՑ N18Դ ՀԱՍՑԵԻ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԿԻՑ ԳՏՆՎՈՂ 58.8ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ, ՆՐԱ ՎՐԱ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ 2.71ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԵԼԻ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐԵԼՈՒ ԵՎ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Գյումրի քաղաքի Կոշտոյան փողոց N18Դ հասցեի հողամասին կից, 58.8(հիսունութ ամբողջ ութ տասնորդական) քառակուսի մետր մակերեսով համայնքապատկան հողամասում ինքնակամ կառուցված է 2.71(երկու ամբողջ յոթանասունմեկ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով բնակելի շինություններ, որը տիրապետում և օգտագործում է քաղաքացի Զարուհի Սարգսյանը :

Նկատի ունենալով, որ շինությունների պահպանելը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, չեն գտնվում Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 731-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետի, թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 3-րդ կետի, 4-րդ բաժնի 33-րդ կետի՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Գյումրի քաղաքի Կոշտոյան փողոց N18Դ հողամասին կից, 58.8(հիսունութ ամբողջ ութ տասնորդական) քառակուսի մետր մակերեսով համայնքապատկան հողամասում ինքնակամ կառուցված 2.71(երկու ամբողջ յոթանասունմեկ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով բնակելի շինությունները համարել համայնքի սեփականություն և այն ճանաչել օրինական:
2. Սույն որոշման 1-ին կետում նշված օրինականացված շինություններ և հողամասը գնման նախապատվության իրավունքով (ուղղակի վաճառք) ձեռք բերելու առաջարկություն անել տվյալ կառույցն իրականացրած քաղաքացի Զարուհի Սարգսյանին :
3. Սահմանված կարգով նախապատրաստել պետական գրանցման համար օրենքով նախատեսված փաստաթղթերի փաթեթը (պատասխանատու՝ քաղաքաշինության և ճարտարապետության բաժին):
4. Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումն իրականացնել օրենսդրությամբ սահմանված կարգով:

28.11.2022

Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ

2022 թ. ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«28» Նոյեմբերի 2022 թվականի N 2588Ա

ՔԱՂԱՔԱՑԻ ԱՆԴՐԱՆԻԿ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԱՐԱԳԱԾ ՓՈՂՈՑ N 8/1ՀԱՍՑԵԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՕԲՅԵԿՏԻ ԻՆՔՆԱԿԱՄ ԲԱՑՎԱԾ 1 ԴՈՒՌԸ, ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քաղաքացի Անդրանիկ Սարգսյանին սեփականության իրավունքով պատկանող Գյումրի քաղաքի Արագած փողոց N 8/1 հասցեի սպասարկման օբյեկտում ինքնակամ բացված է 1 (մեկ) դուռ:

Քաղաքացի Ա.Սարգսյանը դիմել է Գյումրի համայնքի ղեկավարին՝ (մուտքագրված համայնքապետարանում 17.12.2021թ. N 21878թվագրմամբ) նշված շինություններն օրինական ճանաչելու խնդրանքով:

Նկատի ունենալով վերոգրյալը, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի <<Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին>> թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 18-րդ կետի դ ենթակետի հաշվի առնելով, որ կառույցի պահպանելը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Քաղաքացի Անդրանիկ Սարգսյանին սեփականության իրավունքով պատկանող Գյումրի քաղաքի Արագած փողոց N 8/1 հասցեի սպասարկման օբյեկտի ինքնակամ բացված 1(մեկ) դուռը, ճանաչել օրինական: Տեղական բյուջե ենթակա է գանձման 3771 (երեք հազար յոթ հարյուր յոթանասունմեկ) ՀՀ դրամ:
2. Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումն իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

28.11.2022

Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ

ք.Գյումրի 2022 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«28» Նոյեմբերի 2022 թվականի N 2587-Ա

ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ ԼԵՎՈՆ ԱՍԱՏՐՅԱՆԻՆ ԵՎ ՕՎՍԱՆՆԱ ՀԱՐՈՒԹՈՒՆՅԱՆԻՆ ՀԱՄԱՏԵՂ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՄՈՒՍԱՅԵԼՅԱՆ ՓՈՂՈՑ N 169 / 1 ՀԱՍՑԵԻ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ, 241,84 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ԱՐՏԱՔԻՆ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԵԼԻ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ, ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քաղաքացիներ Լևոն Ասատրյանին և Օվսաննա Հարությունյանին համատեղ սեփականության իրավունքով պատկանող Գյումրի քաղաքի Մուսայելյան փողոց N 169/1 հասցեի հողամասում ինքնակամ կառուցված է 241,84(երկու հարյուր քառասունմեկ ամբողջ ութանասունչորս հարյուրերորդական) քառակուսի մետր արտաքին մակերեսով բնակելի շինություն, որը կառուցված է 2001թվականի մայիսի 15-ից հետո :

Քաղաքացի Լ. Ասատրյանը դիմել է Գյումրի համայնքի ղեկավարին՝ նշված շինությունն օրինական ճանաչելու խնդրանքով:

Հաշվի առնելով,որ նշված հողամասերը Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Շիրակ-04 միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթերում ներառված, Գյումրի համայնքի ավագանու 2022 թվականի հունիսի 22-ի 124-Ա որոշմամբ հաստատված գլխավոր հատակագծի հեռանկարային տարածական զարգացման գծագրով հանդիսանում են բնակավայրերի նպատակային նշանակության. Բնակելի կառուցապատում գործառնական նշանակության հող,

Նկատի ունենալով վերոհիշյալը, հաշվի առնելով, որ շինությունները չեն գտնվում Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ բաժնի հիմք ընդունելով քաղաքացի Լ.Ասատրյանի դիմումը՝ (մուտքագրված համայնքապետարանում 2022 թվականի հուլիսի 01-ին N 11822-թվագրմամբ)՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Քաղաքացիներ Լևոն Ասատրյանին և Օվսաննա Հարությունյանին համատեղ սեփականության իրավունքով պատկանող Գյումրի քաղաքի Մուսայելյան փողոց N 169/1հասցեի հողամասում ինքնակամ կառուցված 241,84(երկու հարյուր քառասունմեկ ամբողջ ութանասունչորս հարյուրերորդական) քառակուսի մետր արտաքին մակերեսով շինությունը, ճանաչել օրինական, տեղական բյուջե ենթակա է գանձման 659014(վեց հարյուր հիսունինը հազար տասնչորս):Հայաստանի Հանրապետության դրամ:
2. Գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումը իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

28.11.2022

Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«28» Նոյեմբերի 2022 թվականի N 2586Ա

ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ Ղ.ՂՈՒԿԱՍՅԱՆ ՓՈՂՈՑ N 147/1 ՀԱՍՑԵԻ ԱՍՏԻՃԱՆՆԵՐԸ ԵՎ ԱՌԵՎՏՐԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՕԲՅԵԿՏԸ ՔԱՂԱՔԱՑԻ ՄԿՐՏԻՉ ԱՇՈՏԻ ԽԱԼԱԹՅԱՆԻՆ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Գյումրու Ղ.Ղուկասյան փողոց N 147/1 հասցեի ինքնակամ կառուցված աստիճանները և առևտրի օբյեկտը Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի «Պետական կամ համայնքային հողամասերում գտնվող ինքնակամ կառույցների նկատմամբ պետության կամ համայնքային սեփականության իրավունքի պետական գրանցման» № 731-Ն որոշմամբ հաստատված կարգի համաձայն գրանցված է որպես համայնքի գույք (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 18102022-08-0020): Նշված աստիճանահարթակը կառուցող քաղաքացի Մ.Խալաթյանը տվել է աստիճանները, առևտրի և սպասարկման օբյեկտը, հողամասը վարձակալելու իր համաձայնությունը:

Նկատի ունենալով վերոգրյալը, հիմք ընդունելով Գյումրի համայնքի ավագանու 2021 թվականի մարտի 10-ի N 40-Ա որոշումը, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի «Ինքնակամ շինությունների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» № 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 34,2 կետի և 35-րդ կետի զ) ենթակետի, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 16-րդ կետով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Քաղաքացի Մկրտիչ Աշոտի Խալաթյանին վարձակալության տրամադրել Գյումրի համայնքի սեփականություն հանդիսացող Ղ.Ղուկասյան փողոց N 147/1 հասցեի 81,0 (ութսունմեկ) քառակուսի մետր մակերեսով աստիճանները,առևտրի և սպասարկման օբյեկտը նրա պահպանման ու սպասարկման համար զբաղեցրած 81,0 (ութսունմեկ) քառակուսի մետր մակերեսով հողամասը:
2. Տարեկան վարձավճար սահմանել 210000 (երկու հարյուր տաս հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:
3. Վարձակալության ժամկետ սահմանել 10 (տաս) տարի:
4. Սահմանված կարգով կնքել Ղ.Ղուկասյան փողոց N 147/1 հասցեի գույքի վարձակալության պայմանագիր (պատասխանատու՝ բյուջեի եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժին):
5. Պայմանագրի նոտարական վավերացման և պայմանագրից ծագող իրավունքների գրանցումը կատարել օրենսդրությամբ սահմանված կարգով՝ վարձակալի հաշվին:
6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում՝ քաղաքացի Մ. Խալաթյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

28.11.2022

Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ

ք.Գյումրի 2022 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«28» Հոկտեմբերի 2022 թվականի N2585Ա

ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ ՍՊԱՐՏԱԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ ԵՎ ԱՐՄԵՆՈՒՀԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ ՀԱՄԱՏԵՂ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԱԽՈՒՐՅԱՆԻ ԽՃՈՒՂԻ 7 ՀԱՍՑԵԻ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ 1151,64ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ԱՐՏԱՔԻՆ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԻՆՔՆԱԿԱՄ ԲԱՑՎԱԾ 6(ՎԵՑ) ԲԱՑՎԱԾՔԸ ,8(ՈՒԹ) ԴՈՒՌԸ 11(ՏԱՍՆՄԵԿ) ՊԱՏՈՒՀԱՆԸ ԻՆՔՆԱԿԱՄ ՓԱԿՎԱԾ 2 (ԵՐԿՈՒ)ԴՈՒՌԸ, 4 (ՉՈՐՍ)ՊԱՏՈՒՀԱՆԸ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քաղաքացիներ Սպարտակ և Արմենուհի Հովհաննիսյաններին համատեղ սեփականության իրավունքով պատկանող Գյումրի քաղաքի Ախուրյանի խճ N 7 հասցեի հողամասում ինքնակամ կառուցված է 1151,64(մեկ հազար հարյուր հիսունմեկ ամբողջ վաթսունչորս հարյուրերորդական)քառակուսի մետր արտաքին մակերեսով արտադրական նշանակության շինություններ, ինքնակամ բացված է 6(վեց) բացվածք, 8(ութ) դուռ,11(տասնմեկ) պատուհան, ինքնակամ փակված է 2(երկու) դուռ և 4(չորս)պատուհան:

Քաղաքացի Սպարտակ Հովհաննիսյանը դիմել է Գյումրի համայնքի ղեկավարին՝ (մուտքագրված համայնքապետարանում 16.08.2022 N 14388 թվագրմամբ) նշված շինություններն օրինական ճանաչելու խնդրանքով:

Նկատի ունենալով վերոգրյալը, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի <<Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին>> թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 22.կետի,18-րդ կետի դ ենթակետի հաշվի առնելով, որ կառույցի պահպանելը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Քաղաքացիներ Սպարտակ Հովհաննիսյանին և Արմենուհի Հովհաննիսյանին համատեղ սեփականության իրավունքով պատկանող Գյումրի քաղաքի Ախուրյանի խճ N 7 հասցեի հողամասում ինքնակամ կառուցված 1151,64(մեկ հազար հարյուր հիսունմեկ ամբողջ վաթսունչորս հարյուրերորդական) քառակուսի մետր արտաքին մակերեսով արտադրական նշանակության շինությունները ,ինքնակամ բացված 6 (վեց) բացվածքը, 8(ութ) դուռը, 11(տասնմեկ) պատուհանը, ինքնակամ փակված 2(երկու) դուռը և 4 (չորս քի)պատուհանը ճանաչել օրինական տեղական բյուջե ենթակա է գանձման 3462984 (երեք միլիոն չորս հարյուր վաթսուներկու հազար ինը հարյուր ութանասունչորս) ՀՀ դրամ:
2. Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումն իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

28.11.2022

Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ

ք.Գյումրի 2022 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«28» Նոյեմբերի 2022 թվականի N 2584Ա

ՔԱՂԱՔԱՑԻ ՍԻՄՈՆ ԱՂԱԲԱԲՅԱՆԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԱԹԱՐԲԵԿՅԱՆ ՓՈՂՈՑ N 145 ՀԱՍՑԵԻ ՏԱՆ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ 8,69 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՆԵՐՔԻՆ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԵԼԻՆ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՕՐԻՆԱԿԱՆ ԿԻՑ ԱՎԵԼ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ 13,7ՔԱՌ.Մ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՆՐԱ ՎՐԱ ԱՌԿԱ ՇԻՆՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ

Քաղաքացի Սիմոն Աղաբաբյանին ժառանգության իրավունքով պատկանող Գյումրի քաղաքի Աթարբեկյան փողոց N 145 հասցեի տան հողամասում ինքնակամ կառուցված է 8,69(ութ ամբողջ վաթսունինը հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի և սպասարկման համար օրինական հողամասին կից ավել զբաղեցրած է 13,76(տասներեք ամբողջ յոթանասունվեց հարյուրերորդական) քառ.մ մակերեսով հողամաս որի վրա շինությունները կառուցված են մինչև 2001 թվականի մայիսի 15-ը:

Քաղաքացի Ս.Աղաբաբյանը դիմել է Գյումրի համայնքի ղեկավարին՝ նշված հողամասի և շինությունների նկատմամբ սեփականության իրավունքը ճանաչելու խնդրանքով:

Նկատի ունենալով վերոգրյալը, հաշվի առնելով, որ շինությունները չի գտնվում Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ, ղեկավարվելով <<Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ և 3-րդ հոդվածներով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2006թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 22.1 կետի հիմք ընդունելով քաղաքացի Ս.Աղաբաբյանի դիմումը՝ (մուտքագրված համայնքապետարանում 13.10.2022թ. N 18693 թվագրմամբ)՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Ճանաչել քաղաքացի Սիմոն Ռաֆիկի Աղաբաբյանի (ծնված 17.02.1982թ.) սեփականության իրավունքը Գյումրի քաղաքի Աթարբեկյան փողոց N 145 հասցեի տան կառուցման և սպասարկման համար օրինական հողամասին կից ավել օգտագործվող 13,76(տասներեք ամբողջ յոթանասունվեց հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասի և նրա վրա առկա շինության նկատմամբ:
2. Քաղաքացի Սիմոն Աղաբաբյանին ժառանգության իրավունքով պատկանող Գյումրի քաղաքի Աթարբեկյան փողոց N 145 հասցեի տան հողամասում ինքնակամ կառուցված 8,69 (ութ ամբողջ վաթսունինը հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելին ճանաչել օրինական:
3. Գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումն իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Ս.Աղաբաբյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

28.11.2022

Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ

ք.Գյումրի 2022 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«28» Նոյեմբերի 2022 թվականի N2583Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԹԲԻԼԻՍՅԱՆ ԽՃՈՒՂԻ N 4/4 ՀԱՍՑԵԻ 77,27ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ԱՐՏԱՔԻՆ (68,61 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՆԵՐՔԻՆ) ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ, 690,17 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ ՌԱԻՍԱ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆԻՆ ԵՎ ՄԽԻԹԱՐ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆԻՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Գյումրի քաղաքի Թբիլիսյան խճուղի N 4/4 հասցեի 690,17(վեց հարյուր իննսուն ամբողջ տասնյոթ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասով բնակելի տունը հանդիսանում է համայնքային սեփականություն (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 04022021-08-0011 վկայական):

Նկատի ունենալով, որ նշված շինությունը չի գտնվում Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողերի վրա, ղեկավարվելով <<Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին>> օրենքի 7-րդ հոդվածի 8-րդ մասով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ բաժնի, հիմք ընդունելով Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2022 թվականի նոյեմբերի 11-ի N 213-Ա որոշումը և քաղաքացի Ռաիսա Բաղդասարյանի դիմումը՝ (մուտքագրված համայնքապետարանում 2019 թվականի սեպտեմբերի 27-ին N 13514 թվագրմամբ)՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Գյումրի քաղաքի Թբիլիսյան խճուղի N 4/4 հասցեի հողամասում ինքնակամ կառուցված 77,27(յոթանասունյոթ ամբողջ քսանյոթ հարյուրերորդական) քառակուսի մետր արտաքին (68,61(վաթսունութ ամբողջ վաթսունմեկ հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին) մակերեսով բնակելի տունը 254991 (երկու հարյուր հիսունչորս հազար ինը հարյուր իննսունմեկ) Հայաստանի Հանրապետության դրամ արժեքով, ուղղակի վաճառքի միջոցով օտարել տվյալ կառույցն իրականացրած քաղաքացիներ Ռաիսա Բաղդասարյանին և Մխիթար Բաղդասարյանին:
2. Գյումրի քաղաքի Թբիլիսյան խճուղի N 4/4 հասցեի 690,17(վեց հարյուր իննսուն ամբողջ տասնյոթ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասը, տվյալ հողամասի՝ մինչև 2021 թվականի հունվարի 01-ը գործող կադաստրային գնի չափով, որը կազմում է 810 (ութ հարյուր տասը) Հայաստանի Հանրապետության դրամ 1,0 (մեկ) քառակուսի մետրի դիմաց, ընդամենը՝ 559038(հինգ հարյուր հիսունինը հազար երեսունութ) Հայաստանի Հանրապետության դրամ, ուղղակի վաճառքի միջոցով օտարել քաղաքացիներ Ռաիսա Բաղդասարյանին և Մխիթար Բաղդասարյանին:
3. Գույքի օտարման վերաբերյալ Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի որոշումը կայացնելուց հետո, քաղաքացիներ Ռաիսա և Մխիթար Բաղդասարյանները պարտավոր են 60 օրվա ընթացքում կատարել վճարումները:
4. Առքուվաճառքի հետ կապված պայմանագրերի նոտարական վավերացման և պայմանագրից ծագող իրավունքների պետական գրանցման ծախսերը կատարել քաղաքացիներ Ռաիսա և Մխիթար Բաղդասարյանների միջոցների հաշվին:

28.11.2022

Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ

ք.Գյումրի 2022 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«28» Սեպտեմբերի 2022 թվականի N 2582Ա

ԿՅԱՆՔԻ ԴԺՎԱՐԻՆ ԻՐԱՎԻՃԱԿՈՒՄ ՀԱՅՏՆՎԱԾ ԱՆՉԱՓԱՀԱՍ ԵՐԵԽԱՆԵՐ՝ ԵՐՎԱՆԴ, ԶԱՐՈՒՀԻ ԵՎ ԳՐԻԳՈՐ ՀԱԿՈԲԻ ՔԱՍԱՐՋՅԱՆՆԵՐԻ ԽՆԱՄՔԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2022 թվականի սեպտեմբերի 28-ին հարևանների կողմից ստացված ահազանգի արդյունքում տնայց է կատարվել Գյումրի քաղաքի 145/044 տնակ, որտեղ բնակվում էին Իզաբելլա Վալերիկի Խուրշուդյանը և Հակոբ Գևորգի Քասարջյանը իրենց երեք անչափահաս երեխաների՝ 03.04.2014 թվականին ծնված Երվանդ Հակոբի Քասարջյանի (պետական վկայական ծննդի մասին՝ ԲԱ325026), 17.05.2018 թվականին ծնված Զարուհի Հակոբի Քասարջյանի (պետական վկայական ծննդի մասին՝ ԲԱ325034) և 03.11.2020 թվականին ծնված Գրիգոր Հակոբի Քասարջյանի (պետական վկայական ծննդի մասին՝ ԲԱ316647) հետ:

Խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի և Միասնական սոցիալական ծառայության Գյումրու տարածքային կենտրոնի կողմից համատեղ կատարվել է ուսումնասիրություն և պարզվել է, որ տնակը գտնվում է հակասանիտարական վիճակում, չգազաֆիկացված, առանց ջրամատակարարման, սոցիալ-կենցաղային պայմանները խիստ անբավարար:

Երեխաները ընտանիքում անտեսված են, չխնամված, անտարբերության մատնված:

Ընտանիքում երեխաների հոր՝ Հակոբ Գևորգի Քասարջյանի և մոր՝ Իզաբելլա Վալերիկի Խուրշուդյանի միջանձնային հարաբերությունները լարված են:

Ընտանիքում անչափահաս երեխաների համար ստեղծված չեն գոյատևման և առողջ զարգացման պայմաններ:

Միասնական սոցիալական ծառայության կողմից ներկայացվել է նախնական եզրակացություն/դիրքորոշում անչափահասներ՝ Երվանդ, Զարուհի և Գրիգոր Հակոբի Քասարջյանների հետագա խնամքի կազմակերպման վերաբերյալ (հիմք՝ Միասնական

սոցիալական ծառայության նախնական եզրակացություն/դիրքորոշում, N 2098 տրված՝ 16.11.2022 թվականին):

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 26 մայիսի 2016 թվականի N 551-Ն որոշման, Հայաստանի Հանրապետության «Սոցիալական աջակցության մասին» օրենքի 17-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 31 հունվարի 2017 թվականի N 12-Ա/1 հրամանի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի հունիսի 2-ի N 631-Ն որոշմամբ հաստատված կանոնադրության դրույթներով և հիմք ընդունելով Գյումրի համայնքի խնամակալության և հոգաբարձության մարմնին կից գործող խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի 2022 թվականի նոյեմբերի 25-ի նիստի արձանագրությամբ տրված եզրակացությունը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

Ի նկատի ունենալով երեխաների լավագույն շահի առաջնային գնահատման կարևորությունը՝

1. 03.04.2014 թվականին ծնված Երվանդ Հակոբի Քասարջյանի (պետական վկայական ծննդի մասին՝ ԲԱ325026), 17.05.2018 թվականին ծնված Զարուհի Հակոբի Քասարջյանի (պետական վկայական ծննդի մասին՝ ԲԱ325034) և 03.11.2020 թվականին ծնված Գրիգոր Հակոբի Քասարջյանի (պետական վկայական ծննդի մասին՝ ԲԱ316647) խնամքը և դաստիարակությունը կազմակերպել «Շիրակի մարզի երեխայի և ընտանիքի աջակցության կենտրոն» ՊՈԱԿ-ում և տրամադրել շուրջօրյա խնամք:

25.11.2022

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«28» Նոյեմբերի 2022 թվականի N 2581Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 30-Ի ԹԻՎ 1826-Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 37-րդ հոդվածի 1-ին կետերի դրույթներով, հիմք ընդունելով քաղաքացի Սեդա Մխիթարի Անախասյանի 2022 թվականի օգոստոսի 23-ի դիմումը ուղղված Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի խնամակալության և հոգաբարձության մարմնին (համայնքապետարանում մուտքագրված թիվ 14796 թվագրությամբ)՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2015 թվականի սեպտեմբերի 30-ի «Քաղաքացի Սեդա Մխիթարի Անախասյանի կողմից իր քրոջ՝ Մոնիկա Մխիթարի Անախասյանի և եղբոր Տիգրան Մխիթարի Անախասյանի նկատմամբ խնամակալություն սահմանելու մասին» թիվ 1826-Ա որոշումը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Սեդա Մխիթարի Անախասյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

25.11.2022

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«28» Սեպտեմբերի 2022 թվականի N 2580Ա

ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻ ՄՈՆԻԿԱ ՄԽԻԹԱՐԻ ԱՆԱԽԱՍՅԱՆԻՆ ԻՐ ԵՂԲՈՐ՝ ՏԻԳՐԱՆ ՄԽԻԹԱՐԻ ԱՆԱԽԱՍՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀՈԳԱԲԱՐՁՈՒ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2022 թվականի օգոստոսի 26-ին՝ Գյումրի համայնքի խնամակալության և հոգաբարձության մարմնին է դիմել Գյումրի քաղաքի Աբովյան 2 նրբանցք 16 տան բնակիչ՝ Մոնիկա Մխիթարի Անախասյանը (անձնագիր՝ AT0543357, տրված՝ 17.08.2020 թվականին 016-ի կողմից) խնդրելով իրեն նշանակել հոգաբարձու իր անչափահաս եղբոր՝ 07.08.2007 թվականին ծնված Տիգրան Մխիթարի Անախասյանի (ծննդյան վկայական՝ ԱԲ №522449) նկատմամբ:

Երեխայի մայրը՝ Մարինե Վիլհենի Անախասյանը մահացել է 2014 թվականի օգոստոսի 1-ին (հիմք՝ մահվան վկայական ԱԲ №195228):

Երեխայի հայրը՝ Մխիթար Դոմիկոսի Անախասյանը գտնվում է Ռուսաստանի Դաշնությունում արտագնա աշխատանքի:

«Գյումրու Հոգեկան Առողջության Կենտրոն» ՓԲԸ-ի կողմից 26.08.2022 թվականին տրված տեղեկությունների համաձայն դիմումատուն՝ Մոնիկա Մխիթարի Անախասյանը Գյումրու նյարդահոգեբուժական և նարկոլոգիական դիսպանսերներում հաշվառման մեջ չի գտնվում (տեղեկանքները կցվում են):

Համաձայն «Գյումրու Բնակարանների Սպասարկում» ՓԲԸ-ի կողմից տրված տեղեկանքի՝ Մոնիկա Մխիթարի Անախասյանը իր անչափահաս եղբոր՝ Տիգրան Մխիթարի Անախասյանի հետ հաշվառված և բնակվում են Գյումրի քաղաքի Աբովյան 2 նրբանցք 16 տանը (հիմք՝ տեղեկանք, տրված՝ 24.08.2022 թվականին, N.1557):

Միասնական սոցիալական ծառայության կողմից ներկայացվել է եզրակացություն անչափահաս՝ Տիգրան Մխիթարի Անախասյանի նկատմամբ քրոջը՝ Մոնիկա Մխիթարի Անախասյանին հոգաբարձու նշանակելու վերաբերյալ (հիմք՝ Միասնական սոցիալական ծառայության եզրակացություն, N 2111 տրված՝ 16.11.2022 թվականին):

Նիստին ներկա գտնվող անչափահաս՝ Տիգրան Մխիթարի Անախասյանը տվել է իր համաձայնությունը, որպեսզի իր քույրը՝ Մոնիկա Մխիթարի Անախասյանը նշանակվի հոգաբարձու իր նկատմամբ:

Ելնելով անչափահաս՝ Տիգրան Մխիթարի Անախասյանի շահից, ղեկավարվելով քաղաքացիական օրենսգրքի 33-րդ, 35-րդ հոդվածների, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի հունիսի 2-ի N 631-Ն որոշմամբ հաստատված կանոնադրության, Հայաստանի Հանրապետության Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 31 հունվարի 2017 թվականի N 12-Ա/1 հրամանի դրույթներով, հիմք ընդունելով քաղաքացի Մոնիկա Մխիթարի Անախասյանի՝ 2022 թվականի օգոստոսի 26-ի դիմումը (համայնքապետարանում մուտքագրված 14977 թվագրությամբ) և Գյումրի համայնքի խնամակալության և հոգաբարձության մարմնին կից գործող խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի 2022 թվականի նոյեմբերի 25-ի նիստի արձանագրությամբ տրված եզրակացությունը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Սահմանել հոգաբարձություն՝ Մոնիկա Մխիթարի Անախասյանին (անձնագիր՝ AT0543357) նշանակել հոգաբարձու իր անչափահաս եղբոր՝ 07.08.2007 թվականին ծնված Տիգրան Մխիթարի Անախասյանի (ծննդյան վկայական՝ ԱԲ №522449) նկատմամբ:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Մոնիկա Մխիթարի Անախասյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

25.11.2022

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«28» Հոկտեմբերի 2022 թվականի №2579 Ա

ԳՅՈՒՄՐԻ Ք., ՄՈՒՇ-2 ԹԱՂԱՄԱՍԻ 3-ՐԴ ՓՈՂՈՑ, 18 ՀԱՍՑԵԱԳՐՈՒԹՅԱՄԲ ՀՈՂԱՄԱՍԸ (ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳԻՐ 08-001-0128-0023) 16 (ՏԱՍՆՎԵՑ) ՄԱՍԵՐԻ ԲԱԺԱՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՆՈՐ ՀԱՍՑԵՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի № 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 2-րդ ենթակետով, 33-րդ կետով և հիմք ընդունելով չափագրման արտոնագիր ունեցող «Սոս Մինասյան Մամիկոնի» ԱՁ-ի կողմից տրամադրված հողամասի բաժանման սխեման՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

Գյումրի ք., Մուշ-2 թաղամասի 3-րդ փողոց, 18 հասցեագրությամբ հողամասից թվով 16 (տասնվեց) մասերի բաժանված հողամասերը հասցեավորել համաձայն հավելվածի.

Недействительная подпись

Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2022թ. ք.Գյումրի

Հավելված

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի

Գյումրի համայնքի ղեկավարի

2022թ. Դեկտեմբերի 28-ի

N 2579 Ա որոշման

Գյումրի ք., Մուշ-2 թաղամասի 3-րդ փողոց, 18 հասցեագրությամբ հողամասից թվով 16 (տասնվեց) մասերի բաժանված հողամասերի հասցեավորում

N	Հողամասերի մակերեսը	Հողամասերի հասցեն
1.	127500.0 քառակուսի մետր	Մուշ-2 թաղամասի 3-րդ փողոց 18
2.	1500.0 քառակուսի մետր	Մուշ-2 թաղամասի 3-րդ փողոց 18/1
3.	1500.0 քառակուսի մետր	Մուշ-2 թաղամասի 3-րդ փողոց 18/2
4.	1500.0 քառակուսի մետր	Մուշ-2 թաղամասի 3-րդ փողոց 18/3
5.	1500.0 քառակուսի մետր	Մուշ-2 թաղամասի 3-րդ փողոց 18/4
6.	1500.0 քառակուսի մետր	Մուշ-2 թաղամասի 3-րդ փողոց 18/5
7.	1500.0 քառակուսի մետր	Մուշ-2 թաղամասի 3-րդ փողոց 18/6
8.	1500.0 քառակուսի մետր	Մուշ-2 թաղամասի 3-րդ փողոց 18/7
9.	1500.0 քառակուսի մետր	Մուշ-2 թաղամասի 3-րդ փողոց 18/8
10.	1500.0 քառակուսի մետր	Մուշ-2 թաղամասի 3-րդ փողոց 18/9
11.	1500.0 քառակուսի մետր	Մուշ-2 թաղամասի 3-րդ փողոց 18/10
12.	1500.0 քառակուսի մետր	Մուշ-2 թաղամասի 3-րդ փողոց 18/11
13.	1500.0 քառակուսի մետր	Մուշ-2 թաղամասի 3-րդ փողոց 18/12
14.	1500.0 քառակուսի մետր	Մուշ-2 թաղամասի 3-րդ փողոց 18/13
15.	1500.0 քառակուսի մետր	Մուշ-2 թաղամասի 3-րդ փողոց 18/14
16.	1500.0 քառակուսի մետր	Մուշ-2 թաղամասի 3-րդ փողոց 18/15

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«25» Նոյեմբերի 2022թվականի N 2578Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՎԱՐԴԳԵՍ ՄԵԼՍԻԿԻ ՍԱՄՍՈՆՅԱՆԻՆ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՈՒՂԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի համայնքների միության նախագահ Էմին Երիցյանի հրավերը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավար Վարդգես Մելսիկի Սամսոնյանին գործուղել Վրաստան՝ քաղաք Թբիլիսի՝ <<Քաղաքապետերի դաշնագրի 10-ամյակը Արևելյան գործընկերության տարածաշրջանում>> բարձր մակարդակի գիտաժողովին մասնակցելու նպատակով:
2. Գործուղման ժամկետը 2 (երկու) օր՝ 2022 թվականի նոյեմբերի 29-ից 30-ը ներառյալ:
3. Գործուղման ընթացքում Գյումրի համայնքի ղեկավարի լիազորությունների իրականացումը վերապահել Գյումրի համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Արթուր Ռուդիկի Պապիկյանին:
4. Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ-գլխավոր ֆինանսիստին՝ ընդունել ի գիտություն, որ գործուղման ծախսերը կատարում է հրավիրող կողմը:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Վարդգես Մելսիկի Սամսոնյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

25.11.2022

Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

ք. Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«25» Հոկտեմբերի 2022 թվականի №2577Ա

ԳՅՈՒՄՐԻ Ք., ԳՈՐԾԱՐԱՆԱՅԻՆ ՓՈՂՈՑ, 20 ՀԱՍՑԵԱԳՐՈՒԹՅԱՄԲ ՀՈՂԱՄԱՍԸ (ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳԻՐ 08-001-0151-0021) ԵՐԿՈՒ ՄԱՍԵՐԻ ԲԱԺԱՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՆՈՐ ՀԱՍՑԵՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի № 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 2-րդ ենթակետով, 33-րդ կետով և չափագրման արտոնագիր ունեցող «Սոս Մինասյան Մամիկոնի» ԱՁ-ի կողմից տրամադրված հողամասի բաժանման սխեման՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1) 24962.16 քմ մակերեսով հողամասը հասցեավորել՝
ԳՅՈՒՄՐԻ Ք., ԳՈՐԾԱՐԱՆԱՅԻՆ ՓՈՂՈՑ, 20/2:
2) 34798.55 քմ մակերեսով հողամասը հասցեավորել՝
ԳՅՈՒՄՐԻ Ք., ԳՈՐԾԱՐԱՆԱՅԻՆ ՓՈՂՈՑ, 20/3:

Недействительная подпись

Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2022թ. ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«24» Դեկտեմբերի 2022 թվականի № 2576-Ա

ԳՅՈՒՄՐԻ Ք. ԺԴԱՆՈՎԻ ՓՈՂՈՑ 3 ՀԱՍՑԵԱԳՐՈՒԹՅԱՄԲ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ (ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳԻՐ 08-001-1148-0003) ԵՐԵՔ ՄԱՍԵՐԻ ԲԱԺԱՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՆՈՐ ՀԱՍՑԵՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի № 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 2-րդ ենթակետով, 33-րդ կետով և հիմք ընդունելով քաղաքացի Գայանե Գյունաշյանի դիմումը (համայնքապետարանում մուտքագրված №21349 թվագրմամբ) ու չափագրման արտոնագիր ունեցող «Ս ՖՈՌՄԱՏ ՍԹԱՅԼ» ՍՊԸ-ի կողմից տրամադրված հողամասի և շինության բաժանման սխեմաները՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. 62.46 քմ մակերեսով շինությունը և դրա կառուցման ու սպասարկման համար փաստացի առկա սահմանազատված հողամասը հասցեավորել՝
   ԳՅՈՒՄՐԻ Ք., Ա. ԺԴԱՆՈՎԻ ՓՈՂՈՑ, 3:
2. 66.20 քմ մակերեսով շինությունը և դրա կառուցման ու սպասարկման համար փաստացի առկա սահմանազատված հողամասը հասցեավորել՝
   ԳՅՈՒՄՐԻ Ք., Ա. ԺԴԱՆՈՎԻ ՓՈՂՈՑ, 3/1:
3. 37.88 քմ մակերեսով շինությունը և դրա կառուցման ու սպասարկման համար փաստացի առկա սահմանազատված հողամասը հասցեավորել՝
   ԳՅՈՒՄՐԻ Ք., Ա. ԺԴԱՆՈՎԻ ՓՈՂՈՑ, 3/2:

Недействительная подпись

Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2022թ. ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«24» Հոկտեմբերի 2022 **թվականի** N2573Ա

ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ԱՆԱՀԻՏ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻՆ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑԻ 13 ՀԱՍՑԵՈՒՄ ՀԵՂՈՒԿ ԳԱԶԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով և հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր Անահիտ Աբրահամյանի 2022 թվականի նոյեմբերի 17-ին ներկայացրած հայտը (համայնքապետարանում մուտքագրված 2022 թվականի նոյեմբերի 17-ին 21570 թվագրմամբ)՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ.

1. Թույլատրել անհատ ձեռնարկատեր Անահիտ Աբրահամյանին Գյումրի քաղաքի Մովսես Խորենացի 17 հասցեում իրականացնել հեղուկ գազի վաճառք:
2. Թույլտվության գործողության ժամկետ սահմանել մինչև 2022թ. դեկտեմբերի 31-ը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում անհատ ձեռնարկատեր Անահիտ Աբրահամյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2022թ. ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-01; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«24» Հոյեմբերի 2022 **թվականի** N 2574-Ա

<<ԷՅԹԻԷԼ ՍԵՐՎԻՍԻՍ>> ՍՊԸ-ԻՆ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՕՂԱԿ-ՀԱՂԹԱՆԱԿԻ ՓՈՂՈՑԻ ԽԱՉՄԵՐՈՒԿՈՒՄ, ՍԱՅԱԹ-ՆՈՎԱ 5/2 ՀԱՍՑԵՆԵՐՈՒՄ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ (ՏԵՂԱԲԱՇԽԵԼՈՒ) ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետի, <<Գովազդի մասին>> օրենքի 11-րդ հոդվածի, Գյումրի համայնքի ավագանու 2013թ. նոյեմբերի 12-ի N 124-Ա որոշմամբ հաստատված կանոնների դրույթներով և, հիմք ընդունելով <<Էյթիէլ Սերվիսիս>> ՍՊԸ-ի 2022 թվականի նոյեմբերի 17-ին ներկայացրած հայտը (համայնքապետարանում մուտքագրված 2022 թվականի նոյեմբերի 17-ին 21447 թվագրմամբ)՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Թույլատրել <<Էյթիէլ Սերվիսիս>> ՍՊԸ-ին Գյումրի քաղաքի Խաղաղության օղ.-Հաղթանակի փող. Խաչմերուկում, Սայաթ-Նովա 5/2 հասցեներում տեղադրել (տեղաբաշխել) գովազդի վահանակներին (պաստառներ) ընդհանուր 36 քմ մակերեսով:
2. Թույլտվության գործողության ժամկետ սահմանել 2022 թվականի նոյեմբերի 21-ից մինչև 2023 թվականի մայիսի 20-ը :
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում <<Էյթիէլ Սերվիսիս>> ՍՊԸ-ին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

23.11.2022

ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2022թ. ք. Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-01; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«24» Նոյեմբերի 2022 **թվականի** N 2573Ա

<<ԻՄԻՋ Մ.Գ.>> ՍՊԸ-ԻՆ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՍԱՅԱԹ-ՆՈՎԱ ՓՈՂՈՑՈՒՄ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ (ՏԵՂԱԲԱՇԽԵԼՈՒ) ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետի, <<Գովազդի մասին>> օրենքի 11-րդ հոդվածի, Գյումրի համայնքի ավագանու 2013թ. նոյեմբերի 12-ի N 124-Ա որոշմամբ հաստատված կանոնների դրույթներով և, հիմք ընդունելով <<Իմիջ Մ.Գ.>> ՍՊԸ-Ի 2022 թվականի նոյեմբերի 18-ին ներկայացրած հայտը (համայնքապետարանում մուտքագրված 2022 թվականի նոյեմբերի 18-ին 21589 թվագրմամբ)՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Թույլատրել <<Իմիջ Մ.Գ.>> ՍՊԸ-ին Գյումրի քաղաքի Սայաթ-Նովա (Ակադեմիայի դիմաց) փողոցում տեղադրել (տեղաբաշխել) գովազդի վահանակին պաստառներ ընդհանուր 36 քմ մակերեսով:
2. Թույլտվության գործողության ժամկետ սահմանել 2022 թվականի նոյեմբերի 15-ից մինչև 2022 թվականի դեկտեմբերի 15-ը :
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում <<Իմիջ Մ.Գ.>> ՍՊԸ-ին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

24.11.2022

ՂԵԿԱՎԱՐ **Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ**

2022թ. ք. Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-01; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«24» Հոկտեմբերի 2022 **թվականի** N 2572Ա

<<ԷՅԹԻԷԼ ՍԵՐՎԻՍԻՍ>> ՍՊԸ-ԻՆ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԽՐԻՄՅԱՆ ՀԱՅՐԻԿ ԵՎ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՀՐԱՊԱՐԱԿԻ ՓՈՂՈՑԻ ԽԱՉՄԵՐՈՒԿՈՒՄ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ (ՏԵՂԱԲԱՇԽԵԼՈՒ) ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետի, <<Գովազդի մասին>> օրենքի 11-րդ հոդվածի, Գյումրի համայնքի ավագանու 2013թ. նոյեմբերի 12-ի N 124-Ա որոշմամբ հաստատված կանոնների դրույթներով և, հիմք ընդունելով <<Էյթիէլ Սերվիսիս>> ՍՊԸ-ի 2022 թվականի նոյեմբերի 18-ին ներկայացրած հայտը (համայնքապետարանում մուտքագրված 2022 թվականի նոյեմբերի 18-ին 21590 թվագրմամբ)՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Թույլատրել <<Էյթիէլ Սերվիսիս>> ՍՊԸ-ին Գյումրի քաղաքի Խաղաղության Խրիմյան Հայրիկ և Անկախության հրապ. փող. խաչմերուկում տեղադրել (տեղաբաշխել) գովազդի վահանակին (պաստառներ) ընդհանուր 36 քմ մակերեսով:
2. Թույլտվության գործողության ժամկետ սահմանել 2022 թվականի նոյեմբերի 15-ից մինչև 2022 թվականի դեկտեմբերի 15-ը :
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում <<Էյթիէլ Սերվիսիս>> ՍՊԸ-ին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

24.11.2022

ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2022թ. ք. Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«24» Հոկտեմբերի 2022 **թվականի** N 2571-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 21 -Ի N 1523-Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածի 2-րդ մասով, հաշվի առնելով քաղաքացի Արման Ասատրյանի դիմումը (մուտքագրված համայնքապետարանում 2022 թվականի օգոստոսի 18-ին N 14561 թվագրմամբ)՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Ուժը կորցրած ճանաչել 2013 թվականի հունիսի 21-ի Հայաստանի Հանրապետության Գյումրի համայնքի ղեկավարի «Անհատ ձեռներեց Արման Ասատրյանին հասարակական տրանսպորտի ժամանակավոր հսկիչ սպասարկման կետ տեղադրելու նպատակով Գյումրի համայնքին պատկանող Ե.Չարենցի փող. N 33/3 հասցեի 10,5 քառ.մ մակերեսով հողամասը կառուցապատման իրավունքով տրամադրելու մասին» N 1523-Ա որոշումը:
2. Լուծել համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի կառուցապատման իրավունքի տրամադրման մասին 2013 թվականի հուլիսի 2-ի (գրանցված գրանցամատյանում N 4564) պայմանագիրը:
3. Դիմել Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի Շիրակի մարզային ստորաբաժանում՝ N 11032014-08-0031 վկայականը չեղարկելու համար:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Արման Ասատրյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

22.11.2022

Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ

2022 թ. ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«24» նոյեմբերի 2022 թվականի N 2570-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏ ԳՈՒՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 65-րդ հոդվածի 1-ին, 2-րդ մասերով, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2016 թվականի նոյեմբերի 10-ի N 171-Ն որոշման 1-ին կետով հաստատված հավելվածի 105-րդ, 106-րդ կետերով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Գյումրի համայնքի ղեկավարի նախաձեռնությամբ 2022 թվականի նոյեմբերի 28-ին ժամը 12:00-ին գումարել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու արտահերթ նիստ (այսուհետ՝ նիստ):
2. Սահմանել նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:

24.11.2022

X

Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ

2022թ. Գյումրի

Հավելված՝
Հայաստանի Հանրապետության
Շիրակի մարզի Գյումրի համայնքի
ղեկավարի 2022 թվականի
նոյեմբերի 24-ի N 2570 -Ա որոշման

ՕՐԱԿԱՐԳ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ
28 նոյեմբերի 2022 թվական, սկիզբը՝ ժ. 12:00

1. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՍԵՓԱԿԱՆ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԻՐԱՎԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՔՆՆԱՐԿՄԱՆ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Կ.ԲԱԴԱԼՅԱՆ)

2. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 27-Ի N 284–Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Լ.ՋԻԼԱՎՅԱՆ)

3. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼԻՔ ԱՄԱՆՈՐՅԱ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Լ.ՋԻԼԱՎՅԱՆ)

4. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՎԼԱԴԻՄԻՐ ՍՊԻՎԱԿՈՎԻ ԵՎ ԻՐ ՂԵԿԱՎԱՐԱԾ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՖԻԼՀԱՐՄՈՆԻԿ ՆՎԱԳԱԽՄԲԻ ՀԱՄԵՐԳ ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ՏՈՄՍ ՁԵՌՔ ԲԵՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Լ.ՋԻԼԱՎՅԱՆ)

5. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՍՈՒԲՎԵՆՑԻԱ ՍՏԱՆԱԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ «ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԹՎՈՎ 23 ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶՆԵՐԻ ԳՈՒՅՔԻ ԵՎ ԹՎՈՎ 14 ՄԱՐԶԱԿԱՆ ՀՈԱԿ-ՆԵՐԻՆ ԵՎ ԲԱԿԵՐԻ ԱՆՀՐԱԺԵՇՏ ԳՈՒՅՔԻ ՁԵՌՔԲԵՐՈՒՄ» ՍՈՒԲՎԵՆՑԻՈՆ ՀԱՅՏԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Լ.ՋԻԼԱՎՅԱՆ)

6. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՍՈՒԲՎԵՆՑԻԱ ՍՏԱՆԱԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ «ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԹՎՈՎ 29 ՓՈՂՈՑՆԵՐԻ ՀԻՄՆԱՆՈՐՈԳՈՒՄ» ՍՈՒԲՎԵՆՑԻՈՆ ՀԱՅՏԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Ս.ՋԱՆՈՅԱՆ)

7. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՍՈՒԲՎԵՆՑԻԱ ՍՏԱՆԱԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ «ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2.8 ՄՎՏ/Ժ ՀԶՈՐՈՒԹՅԱՄԲ ԱՐԵՎԱՅԻՆ ՖՈՏՈՎՈԼՏԱՅԻՆ ԿԱՅԱՆԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ» ՍՈՒԲՎԵՆՑԻՈՆ ՀԱՅՏԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Ս.ՋԱՆՈՅԱՆ)

8. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՍՈՒԲՎԵՆՑԻԱ ՍՏԱՆԱԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ «ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԵՐԿՈՒ ԱՅԳԻՆԵՐԻ, ՄԵԿ ՊՈՒՐԱԿԻ ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ ԵՎ ՄԵԿ ԶԲՈՍԱՅԳՈՒ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ» ՍՈՒԲՎԵՆՑԻՈՆ ՀԱՅՏԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Ա.ՇԱԲՈՅԱՆ)

9. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՍՈՒԲՎԵՆՑԻԱ ՍՏԱՆԱԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ «ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍՊՈՐՏԱՅԻՆ ՊԱՐԵՐԻ ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ՄԱՐԶԱԴՊՐՈՑԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ» ՍՈՒԲՎԵՆՑԻՈՆ ՀԱՅՏԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Մ.ՂԱԶԱՐՅԱՆ)

10. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՍՈՒԲՎԵՆՑԻԱ ՍՏԱՆԱԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ «ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԹՎՈՎ 10 ԱՎՏՈԲՈՒՍՆԵՐԻ ԵՎ 10 ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԱՎՏՈԲՈՒՍՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՈՒՄ» ՍՈՒԲՎԵՆՑԻՈՆ ՀԱՅՏԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Գ.ՂԱԶԱՐՅԱՆ)

11. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՍՈՒԲՎԵՆՑԻԱ ՍՏԱՆԱԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ «ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԲԱԶՄԱՖՈՒՆԿՑԻՈՆԱԼ ՏԵԽՆԻԿԱՆԵՐԻ ԵՎ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՈՒՄ» ՍՈՒԲՎԵՆՑԻՈՆ ՀԱՅՏԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Ա.ՈՍԿԱՆՅԱՆ)

12. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՍՈՒԲՎԵՆՑԻԱ ՍՏԱՆԱԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ «ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԹՎՈՎ 1 ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆ ՇԵՆՔԵՐԻ ԷՆԵՐԳԱԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՈՒՄ» ՍՈՒԲՎԵՆՑԻՈՆ ՀԱՅՏԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Գ.ԳՐԻԳՈՐՅԱՆ)

13. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՍՈՒԲՎԵՆՑԻԱ ՍՏԱՆԱԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ «ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԹՎՈՎ 10 ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆ ՇԵՆՔԵՐԻ ՏԱՆԻՔՆԵՐԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ» ՍՈՒԲՎԵՆՑԻՈՆ ՀԱՅՏԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Գ.ԳՐԻԳՈՐՅԱՆ)

14. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑԻ ՓՈՂՈՑ ԹԻՎ 46/1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆ ԲՆԱԿԵԼԻ ՇԵՆՔԻ ԹՎՈՎ 4 (ՉՈՐՍ) ԵՎ ԱՆՏԱՌԱՎԱՆ 3-ՐԴ ԹԱՂԱՄԱՍ 18Գ ՇԵՆՔ, ԹԻՎ 41 ՀԱՍՑԵՈՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐԸ ԱՆԺԱՄԿԵՏ, ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Գ.ԳՐԻԳՈՐՅԱՆ)